

2960

Պրովեսարների բոլոր յերկրների, միացե՛լ

ՍԱՐՄԵՆ

ԴԱՇՏԵՐԸ

Ժ Պ Տ Ո Ւ Մ Ե Ն

၂၈၇၅၅

၂၈၇၅၅

၂၈၇၅၅

၂၈၇၅၅

37

Պրոլետարներ բոլոր յերկրների միացե՛լ

ՍԱՐՄԵՆ

15088
88051

15080
08051

A
I
8886

ԴԱՇՏԵՐԸ ԺՊՏՈՒՄԵՆ



Դավոեպար № 397

Տիրաժ 1000

Պետրոսի IV սպարան Լեմիականում. Պ. № 763

ՆՎԻՐՎՈՒՄ Ե

ՇԻՐԿԱՆԱԼԻ ՎՐԱ ԱՇԽԱՏԱՂ

ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ

ՄԵՐ ՃԱՆԱԳԱՐՔԸ

Հասկած «Հեղափոխության ակիֆներ» պոեմից.

Ու մենք ահավոր ովկյանի կրծքի հորձանքի նման
յեկել ենք ամփից.

Ամուր զարկել ենք մեծ պալատների արյունոտ
սրտին.

Յեւ կապել ենք մենք մեր կյանքերը—ծեզ

Արեգակների կրակոտ յերթին.

Վոր գալիք մարդիկ աշխարհի ծագման առաջին
որվա և վերջին որվա անսահման ճամբեն
Մեզանով չափեն:

Հները գնացին են ճանապարհով,

ուր վոր հեռավոր մի խարդախ ձեռք եր
բոլորին կանչում,

ուր վոր ակիքի հուզանքի նման

քաղցած ամբոխի կռինչն եր հնչում:

Բայց մենք թեքվել ենք ես ճանապարհով,

Դեպի հեռակա ամիերն արևկա,

Ուր մուրճի տակին սալը կըզնդա,

Ուր վոր յեռացող նոր աշխատանք կա:

ՄՐՏԱԲՈՒՂԽ ԿԱՆՉ

Ամբրան արևը այրող աչքերով
 նայում ե ներքև սուր ու շեշտակի.
 անապատի պես բռնված հրով
 վառվում ե սիրտը ծարավ Շիրակի:

Թորախտից հյուժված այտերի նման
 հասկերը տրտնւմ կանգնել են արտում:
 խոտերը թզոճկ, վշտահւր, դժգույն,
 հիվանդ տղի պես հետում են տոթում:

Փռչում փողոցում ծառեր նորատունկ,
 աղաջուր խմած դառնուկների պես
 գլխները թեք կարոտով խորունկ
 Շիրկանալի ջուր, սպասում են քեզ:

Ղաշտերը ծարավ, հանդերն անբերրի,
 գյուղերը փռչում, մրապատ ու մութ,
 թնդանոթաձիգ վաշտը ամպերի
 գյուղին կը բերի և՛ բոթ և՛ կարկուտ:

Անբուժ մի վերքի մրմուռի նման
 ո՛, սիրտ են խոցում դաշտերը տոչոր.
 յեվ մենք փափագով ու միաբերան
 կանչում ենք, ո՛ յեկ, Շիրկանալի ջուր:

Գ Յ Ո Ւ Մ Ր Ւ Ն

Ինչպէս սիրունու ծաղկեփունջն անգին
 նախշում ե կուրծքը իր բանվոր յարի,
 փարվել ե Գյումրին Շիրակի կրծքին
 դարերով կարոտ լույսի ու ջրի:

Անստվեր, անծառ, կիսաքանդ քաղաք,
 ամրան արևը ինչ սուր ե խայթում.
 Ինչպէս արյունոտ մի դաժան դանակ
 կարիքը դեռ տեր՝ իշխում ե մարդուն:

Խրվել են հյուղեր քաղաքի դեմքին
 ծաղկից մնացած բծերի նման,
 իր սրտում ջրի կարոտն անսահման
 խեղդվում ե փոշում հանրային այգին:

Ո՛ր, կարմրադրոշ՝ ես մեր յերկրում
 Հնից մնացած մի սև վերք ե դա.
 Բայց աշխատանքը հանուր ու յեռուն,
 խարխուլ հյուղերին մի նոր տեսք կրտա:

Ծանր բեռան տակ ծոված մարդու պէս
 քաղաքն ե տնքում ծարավի ցավից,
 Բայց փորպէս բախտի չրմեռնող մի հույս,
 Զրանցքը ժպտում, ժպտում ե հեռվից:

ԱՆՋՈՒՐ ԳՅՈՒՂԵՐ

Գյուղերը տենդով բռնված
անջուր հեվում են տոթ-շոգից.
քամին փոշիով բեռնված
մտնում է յերթիկի ծակից:

Ծառերը ծարավ ու պապակ
զլխահակ կանգնած պարտիզում,
փորպես սրտակեզ մի փափագ
կենսատու ջուր են յերազում:

Մի կուղ պառավի տեսքի պես
դեռ այնքան տներ գյուղական,
ու դռան մոտ բուրդի պես վես
կանգնել է աթարե-հսկան:

Մանուկները վոտաբոբիկ
ո՛, կիսաքաղց և կիսամերկ,
փողոցները նեղ ու փոքրիկ,
աղքատությունը մի սև վերք:

Ենտեղ դեռ ձեթի ճրագով
սովրում են ուսմունքը Լենինի,
ենտեղ դեռ թոնրի կրակով
յեփում են կերակուր ինչ վոր մի...

Քանի դեռ չոր են մեր հանդեր,
կարիքը կիշխի տիրաբար.
բայց լսիր, զըրընգում են ձայներ. —
Ջրանցքը դալիս է, — ճանապարհ:

Զ Ր Ի Գ Ա Լ Ը

Ջուրը վարար ու կենսաբեր
 դուրս արշավեց կանալից.
 բորբոքվեցին ուժգին ծափեր
 ու նվազը ցնծալից:


Յեվ ւարդկային հորձանքը հորդ
 խրոնվելով դեպի ջուր՝
 սրտադղորդ աղմուկներով
 լցրեց գյուղեր, դաշտ ու ձոր:

Ու ծայրից ծայր ուրախ զնգաց
 Խորհրդային յերկիրը մեր,
 շրթունքներին ծիծաղ ծաղկած
 խնդացին վորը-մանուկներ:

Արնակարմիր դրոշակներ
 նախշած կուրծքը յերկրի,
 և տոնական, և փառավոր,
 վողջունեցին ջրերին:

ու ինչպես վոր կույրի աչքում
 կաթեցնես լույսի դեղ,
 ենպես ել ջուրն զիլ-զրնգուն
 մտավ խավար ու չոր դեղ:

Յեվ Գյումրին ել զուռնով, յերդով
 սպասում է անհամբեր...
 ու համաշափ մի համերգով
 ջուրը լցվում է հանդեր:



Խնչպես ցուրտ յերկրի մի ճանապարհորդ
Սյրեցյալ գոտու արևի տակին՝
ավազուտներում

Որերով ծարավ քայլելուց հետո
Հասնում ե կանաչ մի դով ոազիս՝
Ու չոր շուրթերը դամում աղբյուրին,
խամում ե ջուրը անհուն հաճույքով,
էնպես ել դաշտը տապից խանձրված
շուրթերը դրած կանալի ջրին՝
ծծում ե անհագ ու վառ բերկրանքով:

Ու ջուրն ել հորձանքով հորդառատ
Յեվ հաղթ, և՛ հանգարդ
հոսում ե մի արտից մի արտ:

Յեվ կուրծքը լեցուն ջրով ու յերգով
Ուռչում ե դաշտը յեզերքից-յեզերք:
Յեվ ինչպես վոր հեզ, հաղթանդամ մի կով
ճոխ արոտներում գոհ ու լայնալանջ
բազմում ե վորպես վեհապանձ մի անձ,
ու կաթը նրա մեծ ստինքներից
վորպես թանկ արծաթ ծորում ե կաթ կաթ,
էնպես ել ջուրը հազեցած հանդի
ծիծղուն շուրթերից
հոսում ե ներքև և՛ հաղթ, և՛ հպարտ:

Հասկերն ել վորպես անխնա բանակ,
 վոր դեմ ե կանգնում սովի արշավին,
 կանգնել են արտում վորպես հաղթանակ
 անվախ նայում են այրող արեին:

Յեւ ինչպես դաժան թշնամու սրի—

հրի տակ ընկած

դարերով գերի մի մեծ ժողովուրդ
 իր ազատության յեզակի ժամին
 ժպտում ե զվարթ բերկրությամբ խորին,
 ենպես ել դաշար— սիրտը Շիրակի—
 լցված կենսաբեր ջրի կարկաչով
 շոգեգութանի հաղթական կանչով,
 ժպտում ե մեր մեծ ու խորհրդային
 հզոր աշխարհին:

ՊԻՈՆԵՐՆԵՐԻՆ

Ձեր կրծքերի կարմիր լենթերն
 վարդերի պես վառ պահեցեք.
 ու սրտերի բերդերի տակ
 հրդեհեցե՛ք մի արեգակ:
 Ինչ վոր յերբեք չի մեռնելու,
 ինչ վոր նորն է հիմքից կերտում,
 մենք տեսնում ենք հիմնադրված
 մեր Միության կարմիր սրտում:
 Դուք ալիքներ մրրկալից,
 յես ձուլվել եմ ձեր հորձանքում.
 գովերգում եմ աշխատանքը,
 վոր ձեզ դարձուց եղպես հզոր.
 Հոկտեմբերյան կարմիր կովի
 հաղթանակի դարկից հետո՝
 հին աշխարհի աչքը խրենք
 մեր մուրճերի թափը հատու:
 Ինչպես անուռ մարդու դանդում
 շողուն լույսի արև ծագի,
 այնպես պապակ մեր դաշտերում
 ջուրն է հոսում ջրանցքների:
 Մեր յերթի դեմ ո՞վ է կարող
 սուր շողացնել, վոր մեզ տիրի.
 Աշխարհն արդեն հրկիզել է

Հոկտեմբերը մեր որերի:
Ձեր կրծքերի կարմիր լենթերն
վարդերի պես վսու պահեցեր,
ու սրտերի բերդերի տակ
հրդեհեցե՛ք մի արեգակ:
Ինչ վոր յերբեք չի՛ մեռնելու,
ինչ վոր նորն ե հիմքից կերտում,
մենք տեսնում ենք հիմնադրված
մեր Միության կարմիր սրտում:

ՅԵՐԳ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ


Մենք մի սկիզբ ենք, վոր վախճան չունի,
 ու հին աշխարհի սրտում խրվել ենք
 վորպես պատմական մի դատավճիռ.
 Կարմիր յերգերը մեր նորակառույց դործարան-
 ներից,
 շողեցութանի կանչը հաղթական —
 մեր ջրանցքների ջրով վողողված դաշտավայ-
 րերից,
 հեղափոխական կարմիր վերելքը և՛ արևելքում,
 և՛ արևմուտքում
 ցնցում են խախտա հիմքը հին կարգի՝
 ինչպես աստղերի իրար բաղխվելը
 խախտում է յերթը տիեզերական մոլորակների:
 Մենք ենք արյունի, մենք ենք ավերի բաժակը
 ծծել,
 բայց մենք ենք նորից դավաճանների գանգերը
 ծեծել,
 մեր գինու թասից ով վոր ըմպում է,
 մեր հուրն է զգում իր կրճքի տակին,
 մենք ենք գիրկ-տալիս, մենք ենք սիրտ տալիս
 արեգակների վառ արեգակին:
 Ու հիմա արդեն մեր խորհրդային
 նավատորմի դուռ

ծովերի վրա, փոթորիկներում
 կանգնել ենք մենք արթուն ու անպարտ՝
 մեր դատակարգի դրոշակի պես:
 Յեվ ըմբոստացած մի բազմամիլիոն մեծ ժողովրդի
 բռունցքի նման հաղթ ու զայրագին
 մեր կուռ բանակի հսկա հասակով
 պատրաստ ենք մարտի:
 Ու դեմ հանդիման ամբողջ աշխարհի
 անաշխատների դաժան բանակին
 կանգնել ենք ահա մեր դատակարգի
 բռունցքի նման՝
 Հաղթ ու զայրագին:


A I
 8886



88051



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045574

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

(034.)

A $\frac{1}{8886}$

№ 5 ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԲԱՆ. ՅԵՎ ԳՅՈՒՂ. ԳՐՈՂՆԵ- № 5
ՐԻ «ՀՈԿՏԵՄԲԵՐ» ՄԻՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ՝

1. Գ. Մահարի. Շիրակի ջրանցքը
2. Արմեն. Շիրկանալ
3. Դ. Աղաբաբյանի ձայնագր. Շիրջրանցք
4. Գ. Սարյան. Շիրակի հարստանիքը
5. Սարմեն. Դաշտերը ժպտում են

ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿ Ե

- 6 Ս. Տարանյի. Լուկաշին

ԳԻՆՆ Ե 15 ԿՈՊ.